

ԱՆՁԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԵՐԵՍԵՆ

(Գրեց՝ ՏՌԻՔ. ՊԱԶԻԼ ԽԱՆ)

Հիմա որ մայբաքաղաքիս օրաթերթերը Աահակ-լինսրոպեան տօներու բաղմազան ինդիրները ամէն կողմէ քննեցին և անսպառ ճառերու հեղեղ-ներով սովորական մահկանացուներու համբերութիւնը երանելի Յովրի փորձերու ենթարկեցին, կ'ուզենք պահմը նայիլ սա շքեղ պատկերներուն միւս կողմէն ալ : Տակաւին լուր չու-նինք թէ բուն Հայ երկրին մէջ ին-չե՛ր կատարուեցան, մեր քնավայրէն գուրս տպրող Հայերու ձայնն էր միայն որ լսելի եղաւ ազգային սա մեծ տօներու տառեն, լուվկասուէն անդին ալ տակաւին պարագ ձայնէն ու սնոտի պերճախօսութիւններէն քայլ մը ա-ռաջ չանցանք և եթէ հանդանակիչ մարմինը փութով ազգու միջոցներու չգիմէ՛ անտարակոյս շատ պղոփիկ պի-տի մեանք մեր կովկասահայ եղբայր-ներու քով : Մենք կը ինդրենք այդ յարդելի յանձնախռումրէն օժանդակ մարմիններ կազմել այն բոլոր խըմ-բակցութիւններէն որոնք այսօր, ազ-գեցութիւն ունին հայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ եւ միացեալ կաղմակերպութեան ուժերով միա-համուռ յարձակումներ գործել բոլոր քսակներու վրայ միլիոնատէրէն սկը-սած մինչեւ տասնոցատէրը :

Վերջին աօներու դիտող մը քանի մը նպաստաւոր ու աննպաստ եղբա-կացութեանց պիտի յանդի մեր ցե-ղային նկարագրի ու զարդացումի մա-սին : Ամէնէն ցնցող երեւոյթը ընդ-հանուր շարժումի անկազմակերպած ինքնարոյս, ինքնազլուխ վիճակն էր : Բարի սրտով, բարի մաքով, բարձր բարոյականութեամբ խուժան մը հե-ղեղի նման կը հոսէր հոն, կը հոսէր հոռ՝ առանց զեկաւոր ուղղութեան մը, առանց ահազին մարմին մը անկանոն ու աննպատակ շարժումներ կ'ընէր ա-ռանց զեկաւոր կարգագրիչ ուղեղի-ի մի բան, Հայութիւնը ներկայացաւ-իր անկանոն խուժան մը, առանց տիսիրլինի ամբոխ մը : Եւ որքա՞ն դիւրին պիտի ըլլար քանի մը պաղ-արիւն, ազդու մարդերով կարգապա-հութիւնը ապահովել այսպիսի զանդ-ուածի մը մէջ որ իր հազարաւոր թե-ւերով յարձակում մը, քսակահա-տում մը, դիտմամբ անկրթութիւն մը չործեց սկիզբէն մինչեւ վերջը : Շատերէն լսեցինք թէ Գումզարուի մէջ կիրակի, կէս օրէն վերջը, Հա-յերը հաստատեցին թէ տակաւին քա-դաքակըթութեան վերին առախճանին չեն հասած : մենք նիշտ ասոր հա-կառակը պիտի պնդենք : Մեր դիտած խուժանը բարոյականութեան և բա-րեկրթութեան զասեր կընար տալ Լոնտոնի կամ Բարիզի միեւնոյն դա- (Նարունակուրիւնը տեսնել Պ. երես)

սակարդի ամբոխներուն : Այն որ բացակայ էր Դում Դափուի մէջ կարգապահն զլուխն էր, վեց հոգիով աղղեցիկ մարմին մը ոլիտի բաւեր այսպիսի բազմութեան մէջ կարգ ու կանոն պահպանել՝ ազացուցանելով թէ Հայերը վ ողուց ի վեր հասած ենքաղաքակրթութեան բարձր աստիճանին : Իզմիրլեան Մատթէոս Սրբազնի ժահուան առօիւ Բերայի մէջ հանդէս մը տեղի ունեցաւ ուր կարգապահութիւնը զովելի մնաց մինչեւ վերջ : Հարկ չկայ կարծելու որ այն որ կարելի էր ընել Բերայի մէջ հաւաքուած Հայերու համար, անկարելի կ'ըլլայ երբ անոնք կը համախմբուին Մայր Եկեղեցիի շուրջ : Փաստեր բազում էին հասաւատելու թէ ընդհանուր ձեռնարկին մէջ մէկէ աւելի մարմիններ եկած խամառուած էին իրենց անկանոն գործակցութենէն քառօ մը արտադրելով փոխանակ կարգուսարքի : Պատրիարքարանէն ընտրուած պաշտօնական մարմիններ կային որոնք հրաւեր չէին ստացած, ուրիշներու հրաւիրաթուղթ էին ուղարկեր շարաթ զիշեր շատ ուշ, շատեր երկու երեք հրաւիրասումաով բակէն վերազարձան տեսնելով որ առանց կոռի ու կազի կարելի չի պիտի ըլլայ եկեղեցիի զուներուն խոկ մատենալ :

Կարգողրիչ մարմին անդամներն ալ մաքառումով էր որ իրենց սնցնելու համար ճամբար կը բանային բակին մէջ : Կարգադիր մասնախումբի անդամներէն կ'արագեատ կ'ըսէր թէ կարգ ու կանոննը խանդաբարուեց միայն ատեն երբ ինք հեռացաւ բակէն : Հայրազգեատ կ'ըսէր թէ ամէն ինչ իր միջոցով մէայն կրնայ կատարուիլ . Նահապեատ կարծիքով բոլոր յանցանքը իր այս երկու պաշտօնակիցներունն էր, որոնք չէին թողուր որ ինք ամէն ինչ կարգադրէ անկաշկանդ . իսկ Ասրագեատ կը նղովէր Հայ ազգը կայէնէն սկսեալ մինչեւ այսօր :

Բարեբախտութար հայ խուժանը բարեմիա է և այս բոլոր Ժխորին մէջ այն քստմինելի տեսաբանը դիտելի չէր որ ամէն երեկոյ թիւնէլի Դալաթիոյ զիտուն կորեիի է Համարել : Լսեցինք թէ Տիկինի մը ճակատէն մի քանի կաթիլ արիւն հոսեցաւ, ուրիշ դէպք մը տեղի չունեցաւ, կտմ հրատարակութեան չառաւ, սակայն տփսոս որ պատմական ու փառաւոր որ մը արատաւորուեցաւ օտարականներու ու հիւրերու առջեւ փոքր մը նախազգուշթեան և մտածուած ծրագրի բացակայութիւնով :